22 հունվարի 2015 թվականի N 28 - Ա

ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1893-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ 6,369.0 հազ. դրամ սկզբնական արժեքով գույքը՝ համաձայն հավելվածի, հետ վերցնել և ամրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմին գույք հանձնելու մասին» N 1893-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելվածի 6-րդ, 16-րդ, 29-րդ, 31-րդ, 38-րդ, 46-րդ, 58-րդ, 76-րդ կետերը և «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

NN ը/կ	Անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը (հազ. դրամ)	Ընդամենը (հազ. դրամ)
6.	Սեղան՝ երկու արկղով	հատ	76	108.4	8,238.4
16.	Գրապահարան	հատ	64	115.0	7,360.0
29.	Աթոռ	հատ	445	45.5	20,247.5
31.	Երկաթյա պահարան	հատ	36	58.5	2,106.0
38.	Մոնիթոր	հատ	4	161.0	644.0
46.	Հեռախոս-ֆաքս	հատ	1	99.0	99.0
58.	Հեռուստացույց	հատ	16	140.0	2,240.0
76.	Համակարգիչ	հատ	4	287.3	1,149.2
	Ընդամենը				185,962.6

».

2) ուժը կորցրած ճանաչել որոշման հավելվածի 1-ին, 3-րդ և 63-րդ կետերը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 20-օրյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունվարի 22-ի N 28 - Ա որոշման

Ց Ա Ն Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՄՐԱՑՎՈՂ ԳՈՒՅՔԻ

(հազ. դրամ)

NN ը/կ	Անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը
1.	Սեղան՝ դիմասեղանով և հեռախոսի տակդիրով	լրակազմ	1	1,273.4	1,273.4
2.	Նիստերի սեղան	հատ	1	450.0	450.0
3.	Սեղան՝ երկու արկղով	հատ	1	108.4	108.4
4.	Գրապահարան	հատ	1	115.0	115.0
5.	Աթոռներ	հատ	1	45.5	45.5
6.	Հեռուստացույց	հատ	1	140.0	140.0
7.	Գորգ (երկու մաս)	հատ	1	2,738.8	2,738.8
8.	Երկաթյա պահարան	հատ	1	58.5	58.5
9.	Համակարգիչ	հատ	1	287.3	287.3
10.	Մոնիթոր	հատ	1	161.0	161.0
11.	Բազմաֆունկցիոնալ սարք	հատ	1	110.2	110.2
12.	Կոնդիցիոներ	հատ	1	722.5	722.5
13.	Հեռախոս-ֆաքս	հատ	1	99.0	99.0
14.	Անխափան սնուցման սարք	հատ	1	37.4	37.4
15.	Տաքացուցիչ	հատ	1	22.0	22.0
	Ընդամենը				6,369.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ Գ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

15_028